

**ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԸ ԿՈՐՅՈՒՆԻ
«ՎԱՐՔ ՄԱՇՏՈՅԻ» ԵՐԿՈՒՄ**

Կորյունի աշխարհները վարքագրություն է՝ նվիրված իր ուսուցչին՝ Մեսրոպ Մաշտոցին, ինչը ենթադրում է համապարասխան մոտեցում: Գրքի նախաբանում Սրբերի մասին գրելու թույլատրությունը փաստարկող Կորյունը մրաձել է, որ նման մի գիրք պետք է գրվի անպայման նորահնար բարդ ու արվեստական լեզվով, որ իր պարզության ու ընկերակիցների միջավայրը պատկերություն ստանա ու գոհ լինի:

Կորյունը, լինելով Մաշտոցի աշակերտը, հարել է հունարան դպրոցին, և նրա երկում շատ նորահնար բառեր դրա վառ ապացույցն են (հունարան հայերենից են մեծա մասամբ մեզ անցել նախածանցները) : Երկի բնույթը բնորոշել է նաև բառապաշարի կիրառման կրոնական շերտը: Շատ քիչ բառեր կարելի է ընդգծել, որ վերաբերում են հասարակական, քաղաքական ու պետական կյանքին, ինչպես՝ ազապագունդ, աշխարհակիր, արքայատուր, գինվորական, թագավորակաց, իշխանակին, կայսերագիր և այլն: Կորյունյան նորակազմ բառերը հիմնականում քրիստոնեական բովանդակության են և վերացարկված, հաճախ իմաստները անհասկանալի: Կորյունը, ըստ էության, աստվածաշնչյան պարզ ու վճիռ հայերենին հակադրեց խրթին, հայերենի ոգուն անհարազատ անկանոնիկ խճողված հայերեն: Աստվածաշնչյան հասարակախոսությանը հակադրեց ճոռմոռոնությունը, վերամբարձությունը՝ դառնալով մեր գրական լեզվի պարմության մեջ խրթնաբան հայերենի հիմնադիրը: Ակնարկված խրթնաբանությունների համակարգում ընդգրկուն և զգալի մասն են կազմում փոխառությունները: Մեր հաշվումներով երկում փոխառությունները 8 լեզուներից են, ընդ որում պահլավերենը գերակշռում է: «Կենդանի Սրբի» մասին (ինչպես նշում է հեղինակը) վարքավայաբանական աշխարհությունը ենթադրում է բառապաշարի կրոնական ուղղվածություն: Քանի որ Նրաչյա Աճառյանը իր «Նայոց լեզվի պարմության» մեջ փոխառությունները խմբավորում է՝ հենվելով լոկ հայերեն բառերի առկա իմաստների վրա, չի քննարկում հնդեվրոպական բառիմաստի խմբերի հետ հայերենի բառիմաստների ունեցած փոխհարաբերությունը և հայերեն բառերի՝ դրանց մեջ գրաված դիրքի հարցերը, ուստի մենք փոխառյալ բառերի իմաստային խմբերի բառապաշարի քննությունը նպատակահարմար ենք համարում կատարել Գևորգ Ջահուկյանի կողմից առանձնացված 23 իմաստային մբերի դասակարգմամբ (իմաստային խմբերը դասակարգելիս Գ. Ջահուկյանը հիմնվել է Բաքի աշխարհության վրա)¹ 1. ֆիզիկական աշխարհ, 2. մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ, 3. կենդանիներ, 4. մարմնի մասեր, գործառնություններ, 5. ուրելիք և ըմպելիք, 6. հագուստ, զարդ, 7. բնակարան, տուն, 8. երկրագործություն, բուսականություն,

¹ Տե՛ս Գ. Ջահուկյան, Նայոց լեզվի պարմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 204-222:

9. ֆիզիկական փաթեթ գործողություններ և սրանց հարաբերությունը առանձին արհեստի և արվեստի հետ, 10. շարժում, արեղափոխություն, 11. ունեցվածք, սեփականություն, առևտուր, 12. փարածական հարաբերություն, արեղ, ձև, 13. քանակ ու թիվ, 14. ժամանակ, 15. զգայական ընկալումներ, 16. զգացմունք, 17. մտածողություն, միտք, 18. ձայնական արտահայտություններ, 19. հասարակական, բաղաբական բաժանումներ, 20. ռազմական գործ, 21. օրենք, 22. կրոն և նախապաշարմունք, 23. դերանվանական մասնիկներ և սպասարկու բառեր:

Պաշտական փոխառություններ: Նայերենը բառեր է փոխառել ինչպես հին պարսկերենից (Ք. ա. 560-330), այնպես էլ միջին (Ք. հ. 256-642) և նոր պարսկերենից (Ժ դարից հետո): Պարսիական չէ, որ ամենաշատ փոխառությունները հայերենում պարսկերենից են: Պարսկությունը փաստում է, որ շուրջ 1600 տարի հայերն իրանական ցեղերի հարեւանությամբ են ապրել, որից 900 տարին՝ անմիջական հպարակության ներքո: Երկուսն իրանական փոխառությունների իմաստային խումբը ամենաընդգրկունն է մնացած 7 փոխառու լեզուների նկատմամբ: Վերոնշյալ 23 իմաստային խմբերից բացակայում են միայն 4-ը՝ ֆիզիկական աշխարհ, կենդանիներ, երկրագործություն և բուսականություն, քանակ ու թիվ: Պաշտական փոխառությունների իմաստային խմբերի պատկերը հետևյալն է՝

1. ֆիզիկական աշխարհ. այս ոլորտում բառեր չկան: Նանդիպաձ աշխարհ, ճանապարհ բառերը, ըստ Ռ. Ղազարյանի բառարանի, չեն համարվում փոխառյալ՝

2. Մարդկություն՝ սեռ, տարիք, ընտանեկան հարաբերություններ. ազգին (գ.³70, բռ.⁴14), դայեկաբար (գ. 108, բռ. 348), ի տոհմն (գ.140, բռ. 565):

3. Կենդանիներ՝ չկան:

4. Մարմնի մասեր, գործառույթներ՝ անդաման. (գ. 88, բռ. 80), ի բազուկս (գ. 100, բռ. 249):

5. Ուրելիք և ըմպելիք. բանջարաճաշակությանց (գ. 86, բռ.258):

6. Նագուստ, գարդ. խարազանագգեստ (գ.86, բռ. 560):

7. Բնակարան, տուն. ապարանիցն (գ.140, բռ. 164), դասարակերտ (գ.108, բռ. 352), դիւան (գ.84, բռ. 373):

8. Երկրագործություն, բուսականություն. չկա:

9. Ֆիզիկական փաթեթ գործողություններ և սրանց հարաբերությունը առանձին արվեստի և արհեստի հետ՝ համապատասխան գործիքներով, նյութերով, արտադրանքով. փաշածոյ (գ.142, բռ. 540), վիմօք (գ.142, բռ. 523), քանդակելովք (գ.142, բռ. 620):

10. Շարժում, արեղափոխություն. պարրասարել (գ. 130, բռ. 401):

11. Ունեցվածք, սեփականություն, առևտուր. գվարճահատոյց (գ.72, բռ. 508), վճարելք (գ. 86, բռ. 528), ռոճիկս (գ.118, բռ. 435), մուրիակս (գ. 128, բռ. 204):

12. Տարածական հարաբերություններ. արեղ, ձև՝ նշանք (գ. 88, բռ. 289), բազկապարած (գ. 88, բռ. 288):

2 Ռ. Ս. Ղազարյան, Գրաբարի բառարան, 2-րդ, Երևան, 2000: Այս և հետագա բոլոր բառերը ստուգաբանությունը հիմնված է այս բառարանի վրա:

3 Տե՛ս Կոթլյուն, Վարք Մաշկոցի, Երևան, 1980, 364էջ: Այս և հետագա բոլոր օրինակներ այս գրքից են:

4 Պայմանական նշումներ՝ գ.-գրքային, բռ.-բառարանային:

13. Քանակ ու թիվ՝ ընդամենը մեկ բառ. բազում, որը Ռ. Ղազարյանի բառարանում չի համարվում փոխառյալ:

14. Ժամանակ. ժամանակի (գ. 70, բռ. 499), յախրեանս (գ.72, բռ. 236), Մեհեկանի (գ.140, բռ. 170):

15. Զգայական ընկալումներ. գունագոյնս (գ.142, բռ. 340), գունակ գունակ (գ. 116, բռ. 340):

16. 16, 17, 18-րդ իմաստային խմբերը, որոնք են՝ զգացմունք, մտածողություն, միտք, ձայնական արտահայտություններ, դիտարկել ենք մեկ շերտի ներքո, քանի որ սահմանագրությունը խիստ հստակ չէ. վարդապետի (գ.70, բռ. 506), յաշակերտ (գ.70, բռ.154), հրեշտակաբար (գ.70, բռ.100), մարենանշան (գ.70, բռ.151), պապուական (գ.70, բռ. 397), մարենագրել (գ.70, բռ.150), նշանակել (գ.72, բռ. 290), մարենապարտ (գ.72, բռ.152), գժանր(դ)ագործին (գ.72, բռ. 502), խրապիչք (գ.72, բռ. 596), մարգարէին (գ.76, բռ.153), հանճարով (գ.76, բռ. 39), ասպնջականիցն (գ.80, բռ.187), զշորհապարտ (գ.82, բռ. 318), դպրութեամբ (գ.84, բռ. 384), պարբասական (գ.90, բռ. 401), նշանագրաց (գ.90, բռ. 17), ազդ (գ.90, բռ. 15), աշակերտասէր (գ.94, բռ.154), յամենաշնորհողէն (գ.96, բռ. 45), մեծապարիս (գ.96, բռ.167), զխրապ (գ.98, բռ.595), խրապել (գ.108, բռ. 596), խրապագիրս (գ.140, բռ. 596), զնշանագիրս (գ.98, բռ. 289), շնորհապարտ (գ.98, բռ. 319), փրադրուծք (գ.100, բռ. 560), պարգախօսս (գ.102, բռ. 406), պարգամացն (գ.102, բռ. 391), յառաջադէմ (գ.104, բռ. 224), վարժ (գ.106, բռ. 507), արժանատր (գ.118, բռ. 210), դպրոցաց (գ.118, բռ. 38), հաւատարութեամբ (գ.120, բռ. 57), զկամացն (գ.120, բռ. 626), բազմադիմիս (գ.128, բռ. 238), ճաշակօք (գ.126, բռ. 122), վշպաց (գ.114, բռ. 526), գմարեանս (գ.146, բռ. 150), զթշուառացուցիչ (գ.116, բռ. 492):

19.Նասարակական, քաղաքական բաժանումներ, հասարակական հարաբերություններ. հրաման (գ.70, բռ. 93), դաշնատր (գ.72, բռ. 394), հրավարակօք (գ.92, բռ.102), ի քաղաքս (գ.94, բռ. 614), առ սահմանօք (գ.98, բռ. 404), հրամանաբերն (գ.100, բռ. 94), թագատրացն (գ.106, բռ. 474), պարգամատրացն (գ.124, բռ. 391), պայման (գ.128, բռ. 384), ի նահանգէ (գ.108, բռ. 269), հագարապետ (գ.140, բռ.11), սահմանել (գ.132, բռ. 440), սպարապետին (գ.116, բռ. 470), հրեշտակս (գ.116, բռ. 100), հնար (գ.116, բռ. 76):

20. Ուսանական գործ. զպարերագմաց (գ.74, բռ. 392), նիզակակիցս (գ.80, բռ. 284), նախարարագունդ (գ.102, բռ. 266), զդժուարամարտյցք (գ.102, բռ. 366), զնդովն (գ.104, բռ. 341), ազարագունդ (գ.106, բռ. 13), ազարօք (գ.118, բռ.12), հրամանակատարբն (գ.140, բռ. 94), ի սահմանակիցս (գ.108, բռ.440), հաշրեցուցիչք (գ.130, բռ. 41):

21. Օրենք. օրինացն (գ.76, բռ. 654), օրինապարգամացն (գ.102, բռ. 656), օրենստույց (գ.104, բռ. 655), զօրինատր (գ.136, բռ. 656):

22. Կրոն և նախապաշարմունք. պսակել (գ.76, բռ. 422), սպասատր (գ.84, բռ. 470), խարագանագետ (գ.86, բռ. 560), դիական (գ.102, բռ. 502), դիւանդ (գ.120, բռ. 373), զհայրապետաց (գ.124, բռ. 31), վանականաց (գ.108, բռ. 500), սպասավորութիւն (գ.108, բռ. 470), խնկօք եղեալ (գ.136, բռ. 591):

23. Դերանվանական և սպասարկու բառեր ու մասնիկներ. վասն (գ.70, բռ. 502), հանգոյն (գ.72, բռ. 36), գյանդիմանական (գ.76, բռ. 219), զհանգամանսն (գ.74, բռ. 33):

Նունական, լարինական փոխառություններ. Աճառյանը միանգամից այս խումբը անվանում է հունա-լարինական և բացառում դրա գոյությունը, իսկ Ջահուկյանը պարմական իրողությունների և շփումների արդյունք է համարում դրանք:

«Լարք Մաշտոցի» երկում հունական փոխառությունների թիվը համեմատաբար քիչ է: Իմաստային խմբերն են՝

1. Ձայնական արտահայտություն, խոսք, ընթերցանություն և գիր. կայսերագիր (գ.114, բռ. 627), օգոստոսականացն (գ.114, բռ. 649):

2. Օրենք. գկանոնական (գ.130, բռ. 631), արգասիս եղևալ (գ.106, բռ. 203):

3. Կրոն, նախապաշարմունք. կաթողիկոսն (Կոբյունը կիրառում է կաթողիկոս ձևը, գ.90, բռ. 619), եպիսկոպոսի (գ.90, բռ. 394), կղերականօքն (գ.94, բռ. 660), յեկեղեցոյն (գ.96, բռ. 388), բարբարոսական (գ.110, բռ. 261), սաղմոսիւք (գ.136, բռ. 441), մարտիրոսական (գ.136, բռ.162), կանթեղօք (գ.142, բռ. 629):

4. Միայր, միաժողություն. քարսւս(գ) (գ.102, բռ. 635), հոկորոբաբն (գ.102, բռ. 90):

Մնացյալ իմաստային խմբերը բացակայում են:

Լարինական փոխառություն երկում ընդամենը մեկն է. ի կառս (գ.116, բռ. 634):

Ասորական փոխառություններ. Աճառյանը և Ջահուկյանը ասորական փոխառությունների ներթափանցման փորձեր շրջաններ են ներկայացնում: Ըստ Աճառյանի՝ պարբերակալ ասորական փոխառությունների 4 շրջան՝ ա. -Բ. ա. 1-ին դար, բ. -Բ. հ. 3-4-րդ դարեր՝ քրիստոնեական քարոզչության շրջան, գ. -Բ. հ. 4-5-րդ դար՝ թարգմանչական շրջան, դ. անկման շրջան: Ջահուկյանը հետևյալ շրջաններն է ներկայացնում՝ ա. նրանց թագավորական շրջանի ժամանակ՝ -Բ. ա. 6-րդ դար, բ. շփման՝ -Բ. ա. 2-րդ դարից մինչև -Բ. հ. 2-րդ դար, գ. քարոզչության ու դպրության՝ -Բ. հ. 3-4-րդ դար: Կոբյունի երկում ասորական փոխառությունները հետևյալն են՝

1. Մարդկություն, սեռ, փարիք. գրդայութեան (գ.76, բռ. 564):

2. Ձայնական արտահայտություն, խոսք, ընթերցանություն և գիր. թարգմանչի (գ.70, բռ. 480):

3. Կրոն և նախապաշարմունք. փրկչին (գ.78, բռ. 611), սաբանայակիր (գ.102, բռ. 446), քարոզեցի (գ.104, բռ. 634):

Զննդական փոխառություններ. սրանք ևս քիչ են, երկում հանդիպում է ընդամենը 2 օրինակ՝

Շարժում, արեղափոխություն. հաճեցի (գ.84, բռ. 16)

Ժամանակ. Նաուսարդի (գ.134, բռ. 273)

Կովկասյան փոխառություններ. հայերենը կարարել է փոխառություններ նաև կովկասյան լեզուներից: Բայց ավելի հաճախ փոխաբերություններ են եղել, քանի որ այդ ժողովուրդները գտնվել են ավելի ցածր զարգացման մակարդակի վրա: Կովկասյան փոխառության միայն մեկ օրինակ ունենք երկում՝ մշակութուն (գ.102, բռ.196):

Երբայական փոխառություններ. Նրաչյա Աճառյանը իր «Նայոց լեզվի պարմություն» աշխատության մեջ ներկայացնում է 138 երբայական փոխառություն, որոնցից 123-ը համարում է անգործածական, իսկ մնացյալ 15-ը գործածական, կրոնական բնույթի: Երկում ունենք 2 օրինակ՝ ամեն (գ.146, բռ. 47), Պասեքին (գ.114, բռ. 388):

Արքայական փոխառություններ. մեկ բացառիկ օրինակ է՝ կնքեալ (գ.136, բռ. 663):

«Վարք Մաշտոցի» երկում անմիջական (ուղղակի) փոխառությունների ենթ հանդիպում, բացառությամբ 5 միջնորդավորված (անուղղակի) միավորների՝ ի սափանայական, սափան (եբր., յուն.-ից / եբր., ասոր.-ից, գ.88, բռ. 446), Պասեքին (եբր., յուն.-ից, գ.114, բռ. 388), հեթանոսաց (յուն., ասոր.-ից, գ.126, բռ. 60), սինհոդոսական (յուն., ասոր.-ից, գ.134, բռ. 457):

«Վարք Մաշտոցի» երկը իր բնույթով, աստվածաշնչյան իրողությունների հետ համեմատելու, Մեսրոպ Մաշտոցի ուղեորության և այլնի հետ կապված՝ չնայած իր փոքրածավալությանը՝ ներառում է շուրջ 7 փասնյակի հասնող անձնանուններ, որոնց գրեթե 80 քոկոսը փոխառյալ են:

Եբրայական անձնանուններ.

Արքանամու⁵ (գ.76, բռ. 27) ար. < եբր. է, որ նշանակում է «հայր ազգաց կամ հայր բազմություն»,

Անանիաս (գ.108, բռ. 148) ար. < եբր. է, որ նշանակում է «Աստուածաշնորհ», քառադարձված է հուն. և ասոր. ձևերից,

Բենիամեն (գ.116, բռ. 407) ար. < եբր. է, որ նշանակում է «որդի աջոյ»,

գԴանիել (գ.76, բռ. 10) ար. < եբր. է, որ նշանակում է «գափառոր իմ Աստուած»,

գԴաթայն (գ.74, բռ. 22) ար. < եբր. է, որ նշանակում է «սիրելի, սիրեցյալ»,

Ենովք (գ.118, բռ.121) ար. < եբր. է, որ ծագում է «օրհնել, նվիրագործել» բայից և նշանակում է «նուիր(գ., բռ.) ար. < եբր. է, եալ»,

Երեմիա (գ.118, բռ.136) ար. < եբր. է, ծագումը լավ բացատրված չէ, հիմնականում բացատրվում է իբրև «լքված»,

գԻսարայելի (գ.78, բռ.390) ար. < եբր. է, որ ծագում է կովել, մարտնչել բառերից,

Նաբել (Աբել) (գ.92, բռ.17) ար. < եբր. է, նշանակում է «սուգ»,

Մովսէսի (գ.76, բռ.419) ար. < եբր. է հուն. փառադարձմամբ, ըստ

Սուրբ Գրքի նշանակում է «ջրից հանված»,

Յակոբոս (գ.82, բռ.481) ար. < եբր. է հուն. փառադարձմամբ, ըստ

Սուրբ Գրքի «խաբող», ըստ եբրայացոց՝ «գարշապար»: Ստուգաբանությամբ այս երկու իմաստները պետք է համարել իրար հակասող, որովհետև ըստ եբրայացոց՝ խաբել նշանակում է «մեկի ետևից գնալ՝ կրունկը բռնել»,

Յոբայ (գ.76, բռ.529) ար. < եբր. է հուն. փառադարձմամբ, որ նշանակում է «հայր»,

գՅոթորի (գ.76, բռ.529) ար. < եբր. է հուն. փառադարձմամբ, ծագումը անհայտ է,

Յովնաթան (գ.120, բռ.705) ար. < եբր. է հուն. փառադարձմամբ: Կազմված է «Աստված, Եհովա» և «բալ, նվիրել» բառերից և նշանակում է բուն «աստվածատուր կամ աստուածանուիր պարզև Տեառն»,

գՆաթանայել (գ.78, բռ. 13) ար. < եբր. է հուն. փառադարձմամբ, նշանակում է աստվածանվեր, աստվածատուր,

Սահակ (գ.90, բռ. 348) ար. < եբր. է հուն. փառադարձմամբ, ծագում է եբրայական «ծիծաղի կամ կատակի» արմատից,

5 Այս և հետագա բոլոր անձնանունների ստուգաբանության համար կիրառվել է. Նր. Աճառյան, Նայոց անձնանունների բառարան, 1942-1962, հ. 1-5: Ամբողջական բառափոխվածները չեն քրվում:

Սամուել (գ.122, բռ. 380) ար. < երբ. անվան հուն. փառադարձմամբ, բուն իմաստը է «Աստված լսեց»,

զՍամփսոնին (գ.74, բռ. 387) ար. < երբ. է հունական փառադարձմամբ, ծագում է արեգակ բառից *semes*:

Նունական անձնանուններ.

Ակակիոս (գ.114, բռ. 87) ար. < հուն., նշանակում է «անմեղ»,

Արարիկոս (գ.114, բռ. 260) ար. < հուն., որ բուն նշանակում է «արարիկեցի», սրանից է հետև լատ. Atticus անձնանունը,

Արկադոս (գ.112, բռ. 284) ար. < հուն. և լատ. անվանումներից, որ նշանակում է բուն «Արկադիա գաղաթից»,

Թեոդոս (գ.112, բռ. 292) ար. < հուն., որ նշանակում է «Աստվածաբուր»,

Ղևոնդէոսն (գ.114, բռ.140) ար. < հուն., հայերենի մեջ սովորական ձևն է Ղևոնդ, բայց կա նաև օտարաձև Ղևոնդիոս, ինչպես և Ղևոն (Նյուբշ. 335): Այժմ գործածական է Ղևոնդ, աղա. Ղևոնդ,

Ղուկասոս (գ.82, բռ.148) ար. < հուն., նշանակում է «յարութիւն»,

Յովհան (գ.98, բռ. 537) ար. < հուն. (ըստ Նյուբշմանի նաև ասոր.), նշանակում է «հնազանդութիւն»,

Սրեփանոսի (գ.136, բռ. 600) ար. < հուն., որ բուն նշանակում է «պսակ»,

զՏիմոթէոս (գ.138, բռ.154) ար. < հուն., որ բուն նշանակում է «աստվածայարգ, աստվածապարի»:

Պարսկական անձնանուններ.

Արարաշէս (գ.118, բռ. 305) ար. < արշակունյան պիլ-ով է, հայրսկ. նշանակում է «արդարությամբ իշխող»,

Բակուր (գ.110, բռ. 367) ար. < պրս. *bag-pur* «աստվածորդի» ձևից,

Խուրս (գ.120, բռ. 563) ար. < ծագումն անհայտ է (պրս. *xirs* «արջ» հարմար չէ ձայնավորի համար),

Յազկերտի (գ.146, բռ. 481) ար. < պիլ. փառադարձմամբ էասոր., բուն նշանակում է «աստվածակերտ»,

Վահան (գ.142, բռ. 509) ար. < Վահագն անունից կրճարված կամ հյ. Ծահան բառից (Նյուբշ.509),

Վահրիճ (գ.92, բռ. 29) ար. < պիլ., նշանակում է «բարեհոս»,

Վասակ (գ.108, բռ. 43) ար. < իրան. և փառադարձվել է լատ.-ից,

Վարդան (գ.106, բռ. 74) ար. < իրան.,

Վռամայ (գ.146, բռ. 126) ար. < իրան. Bahrām անունն է (յրեն Վահագն) այնպես որ, ինչ որ Պարսից մեջ Bahrām է, Նայոց մեջ կոչվում է Վռամ,

Վռամշապուհ (գ.94, բռ. 126) ար. < իրան. Վռամ+Շապուհ անունը, այժմ քիչ է գործածական:

Ատրական և հաթեան (խեթական) անձնանուններից երկուսն էլ կան մեկական օրինակ.

Մուշէ (գ.108, բռ. 463) ար. < ասոր. Muse անունից, որ նույն Մովսէսն է,

Մուշեղ (գ.120, բռ. 455) ար. < հաթեան Mursili անունից, որով կոչված են Նաթեան մի քանի թագավորներ:

Անհայտ ծագման անձնանուններն են. Առաւանայ (գ.84, բռ.205), Աշուշայ (գ.122, բռ.191), Դանան (գ.118, բռ.10), Մաշթոց (գ.70, բռ.214), Շաբիթ (գ.88, բռ.537), Վաղե-նակ (գ.108, բռ.33):

Բառարանում չներառված անձնանուններ են Ակումիար (գ.112), Անսարդիս (գ.112), Արծիոյ (գ.120), Արսվաղ (գ.118), Բաբիլաս (գ.94), Թադիկ (գ.114), Կրմանայ (գ. 146), Նովանուս (գ.96), Յիսուսի (գ.136), զՆերբուրայն (գ.74), Ջադայ (գ.110), ՝ Բահարու (գ.74), Բրիսարու (գ. 82, Աճ.-մեր մեջ (հայերի) գոյություն չի ունեցել):

Նայկական անձնանուններ են. Գինթ(ար) (գ.114, բռ.471), Գիւր (գ.108, բռ.474), Դուսար (արևն Դսարիկ) (գ.136, բռ.83), զԿարապետին (գ.78, բռ.582), Վարդկան (գ.106, բռ.114), Տիրայր (գ.10, բռ.): «Վարք Մաշտոցի» երկում Դուսար(Դսարիկ) միակ իգա-կան սեռի անձնանունն է: Պարսահական չէ, որ անձնանունների մեծ մասի սրուգարա-նությունը առնչվում է ասորվածային մեկնությունների հետ:

Այսպիսով, «Վարք Մաշտոցի» երկում փոխառությունների ուսումնասիրությունը հնկարագրում է 4-5-րդ դարում մեր լեզվի վիճակը, նրա ներագոյացությունները և պար-մական փոխառությունները այլ լեզուների ու ազգերի հետ:

1	2	3	4	5	6	7	8	9
Դասակարգու-մը ըստ լեզունե-րի իմաստային խմբերի	Պակարեն	Նունարեն	Ասորերեն	Զինդերեն	Արմկառյան	Եբրայական	Աքքադական	Լարինական
1. Ֆիզիկական աշխարհ	- *	-	-	-	-	-	-	-
2. Մարդկութ-յուն՝ սեռ, տարիք	+	-	+	-	-	-	-	-
3. Կենդանիներ	-	-	-	-	-	-	-	-
4. Մարմնի մա-սեր, գործա-ռույթներ	+	-	-	-	+	-	-	-
5. Ուրելիք և ըմպելիք	+	-	-	-	-	-	-	-

1	2	3	4	5	6	7	8	9
6. Նագուստ, գարդ	+	-	-	-	-	-	-	-
7. Բնակարան, փուն	+	-	-	-	-	-	-	-
8. Երկրագործություն, բուսականություն	-	-	-	-	-	-	-	-
9. Ֆիզիկական փարբեր գործողություններ	+	-	-	-	-	-	-	-
10. Շարժում, արեղափոխություն	+	-	-	-	-	-	-	-
11. Ունեցվածք, սեփականություն, առևտուր	+	-	-	-	-	-	+	-
12. Տարածական հարաբերություն	+	-	-	-	-	-	-	-
13. Քանակ եւ թիվ	-	-	-	-	-	-	-	-
14. Ժամանակ	+	-	-	+	-	-	-	-
15. Զգայական ընկալումներ	+	-	-	-	-	-	-	-
16. Զգացմունք	+	-	-	+	-	-	-	-
17. Մտածողություն, միպք	+	+	-	-	-	-	-	-
18. Չայնական արքայադատություն	+	+	+	-	-	-	-	-
19. Նասարական բաժանումներ	+	-	-	-	-	-	-	-
20. Ռազմական գործ	+	-	-	-	-	-	-	-
21. Օրենք	+	+	-	-	-	-	-	-
22. Կրոն եւ եւրոպական 2 աբմունք	+	+	+	-	-	+	+	-

1	2	3	4	5	6	7	8	9
23. Դերանվանական մասնիկներ, սպասարկու բառեր	+	-	-	-	-	-	-	-

	Դաժկողներն								
Փոխառությունների քանակային վիճակագրական պարկերը ըստ լեզուների	պիտ. հայրս. փրան.	Տունարեն	Երբայերեն	Ատրերեն	Ջնդերեն	Նովկայան	Արքադական	Լարիներեն	Նաթեան
Քանակ**	249 5 9	31	20	12	2	1	1	1	1

* + նշանով նշվում են առկաները, - չնդգալները:

** Սույն քանակի մեջ մտնում են նաև անձնանունները: Բառակրկությունները չեն մտնում հաշվի մեջ: